Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.16/[190633]-14

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Վ. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Մ. Առաքելյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Մ. Սարգսյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար

Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարության վարչության պետ
Մ. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Ա. Ասլանյան	ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ
Գ. Պողոսյան	ՎԶԵԲ-ի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Կ. Վարդանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ
Հ. Ավագյան	ՎԶԵԲ-ի փորձագետ
Դ. Հարությունյան	ՎԶԵԲ-ի փորձագետ

1. Շրջանառության հարկի 1 տոկոս դրույքաչափի կիրառման օրենսդրական նախագծերի վերաբերյալ

(Ս. Կարայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ Փ. Թադևոսյանին՝

ա. օրենսդրական փոփոխության առաջարկը գրավոր ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե,

բ. օրենսդրական փոփոխության առաջարկը քննարկել ՓՄՁ-ների ներկայացուցիչների հետ և հաջորդ նիստում ներկայացնել միասնական կարծիք.

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին համատեղ քննարկել «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվելիք օրենսդրա-

կան փոփոխության առաջարկը և հաջորդ նիստին ներկայացնել համապատասխան եզրակացություն:

2. Ռիելթորական կազմակերպությունների համար սահմանված արտոնագրային վճարի չափի վերաբերյալ

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին համատեղ քննարկել ռիելթորական գործունեության ոլորտի հարկային բեռի նվազեցման հնարավորության հարցը և հաջորդ նիստին այն դարձնել քննարկման առարկա:

3. Շրջանառության հարկ վճարողի հաշվառումը որպես ավելացված արժեքի հարկ վճարող և դրանից բխող խնդիրների վերաբերյալ

(Փ. Թադևոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն, որ տնտեսավարող սուբյեկտները կարող են դիմել ոչ միայն հարկային մարմինի տարածքային տեսչություններ, այլ նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե.

2) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ ևս մեկ անգամ քննարկել շրջանառության հարկ վճարողի հաշվառումը որպես ավելացված արժեքի հարկ վճարող և դրանից բխող խնդիրները և ըստ այդմ ներկայացնել լուծման առաջարկ.

3) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացնել Մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի առաջիկա նիստի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ